



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



Ltn  
V 859



1999 1


65

4

# ՔԱՐՈՒԿԻ ՄԸ ՄՏՄԵՏՈՒԵՆԵՐԸ

ԵՒ

# ՀԱՅՈՒ ՄԸ ՄՏՄԵՏԱԼԻՔՆԵՐԸ




Էս միայն բաժնոջիկ—Հայու, համար  
գրեցի :

\*

Էս միայն բարեմիտեանու, հետ կ'ու,  
չեմ իստակցից :

\*\*

Կ . Բ . Ն .



## ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻԿԷԼՏԵՍԵԱՆ

1864 ՅՈՒՆՈՒԱՐ 1 ՈՅԺԴ

ԿԵՆՏՐՈՆ



4 859-60

28 AG1



## ՍԻՐԵՆԻ ԼՂԱՐԱՅՐ

ԼՂՁի անգամ չէ որ հասարակութեան մը առջին երեւնալու պատիւ կ'ունենամ, որուն անգամ մը ծընած եմ: Ուրիշ անգամներ ինչ ընդունելութիւն կամ որպիսի ծափահարութիւն ունեցած եմ՝ անիկա հասարակութիւնը անշուշտ իզմէ ազէկ գիտէ: Հիմա նոր ընդունելութեան մը նայինք, որն որ կարծեմ թէ շատ ազգի ազգի եղանակներ պիտի ունենայ, այնչափ գոյնզգոյն աստիճաններ պիտի ցուցնէ՝ որչափ որ բաւաւորութեան եղանակաւորութիւն կայ նէ Հայ ազգին մէջ: Բայց հոգ չէ. հարկ մըն է որ ես գրեմ, ինչ պէս որ հարկ մըն է որ խօսունը խօսի, մարդ իր խօսելովը մարդ է, իր խօսելովը երջանիկ է: Եւ որովհետեւ աս խօսիլը՝ տեղւոյ ու ժամանակի մէջ գտնուող մարդկանց համար անկատար միջոց մըն է, անոր համար նոյն խօսիլը կատարելութիւն մը կը ստանայ, երբ գրի տակ կը մանէ: Ու ես ինչ բանով որ աւելի երջանիկ կ'ըլլամ՝ նոյնը կատարելութեամբ չեմ աշխատիլ: Ուրեմն իզմէ հեռուներու և ետքիներու հետ խօսակցելու համար՝ պէտք է որ գրութեան մը գիմեմ և ասով իմ յղացածներուս ճնունդ մը տամ՝ համողւած ըլլալով որ ասով թէ ես կրնամ գոհ ըլլալ եւ թէ ուրիշի մ'ալ օգուտ ընել. թէպէտ միշտ խղճմտանքս հանգիստ է որ բարիք ընելու վախճանաւ կը գործեմ և ճմարտութիւն մը խօսելու կ'աշխատիմ. սակայն միտքս կը ցուցնէ որ միշտ ամէնուն հաճելի ըլլալն անկարելի է, որովհետեւ նոյն իսկ իմ ընտանեացս շրջանակին մէջ չեմ

կրնար միշտ ինձի համաձայն զգածմունք ու համոզում  
 գտնել և շատ անգամ և ոչ խի իմ սրտիս ու մտացո  
 մէջ նոյնը կը գտնեմ, ուր մտաց հասարակութեան մը  
 մէջ, ուր մտաց հասարակութեանց մէջ: Բայց դար-  
 ձեալ կ'ըսեմ, ես պէտք է որ խօսիմ (թէպէտ առանց  
 մէթոտի, թէպէտ կրկնաբանութեամբ, թէպէտ խըր-  
 թին, թէպէտ ռամկական, թէպէտ սուական, թէ-  
 պէտ յայտնի), ես պէտք է որ խօսիմ (երբեմն աստ  
 ուածաբանութեամբ, երբեմն փիլիսոփայութեամբ,  
 երբեմն բանաստեղծութեամբ, երբեմն հեգնաբանու-  
 թեամբ. սակայն միշտ ազգային — բարոյական — կրօնա-  
 կան և ոչ թէ եկեղեցական — հոգևորական — կրօնական  
 գիտամբ), ես պէտք է որ խօսիմ որ ուրիշն ալ խօսի  
 ու խօսակցինք, մխիթարելինք, բացուելինք, և գուցէ  
 սիրտերուն ծալքը բացուելու առե՛ն մտքերու թերթ  
 մըն ալ կը բացուի:



Տարակոյս չկայ որ աշխարհքիս վրայ ամէն բան պատմութիւն է . և պատմութիւնն ալ երկու ընթացք ու երկու ծայր ունի , մէկը երկրի վրայ կը քալէ ու մէկալը երկրէն դուրս , մէկը երկրի վրայ է ու մէկալը երկինք . աւելի բացայայտ բտելու համար՝ մարդիկ մէյ մը սերնդեամբ կը յառաջանան մէյմ'ալ մտօք : Սերնդեամբ յառաջանալու ատեն շատ դէպքերու կը հանդիպին , կը ծնանին , կ'ապրին , կը մեռնին և այս միջոցիս մէջ շատ պատմութիւն կ'ունենան , բայց աւմենէն աւելի զարմանալի ան կ'երևայ ինծի որ շարունակ կը փոխուին պէսպէս կ'ըլլան . ճերմակ ցեղէ մը դեղին , կարմիր , գորշ , սեւ ցեղեր յառաջ կու գան . ճերմակը սեւի փոխուելու համար՝ անշուշտ շատ պատճառներ կան . Վովկասեան օրիորդէ մը խափշիկուհի մը յառաջ գալը շատ հանճարներ յոգնեցուցած է ու դեռ կը յոգնեցընէ : Բայց այս ճիւղը թող տալով՝ կ'ըսենք նաև որ միտքին յառաջանալն ալ նման է մարմնոյն . աս ալ ամէն գոյնի մէջ կը տեսնուի , ճերմակէն մինչուկ սեւ եղանակաւ որութիւն կը ցուցընէ : Եւ իրօք ալ մարմին ու միտք իրարու վրայ միշտ փոփոխ ազդեցութիւն ցուցուցած են , իրարմէ առած իրարու առած են , իրարու հետ պատերազմած , իրարու հետ հաշտուած , իրարու նմանած իրարմէ զատուած , իրարու հետ ամուսնացած իրար արձակած են , և միշտ մէջերնին գաղտնիք մը խորհուրդ մը (միտքէր մը) պահած են մեզի համար , որպէս զի զմեզ գործունէութեան մէջ պահեն , և նոյն գաղտնիքը իբրև զսպանակ կամ մղանակ մը աշխարհքիս բարոյական մասը կը շարժէ՝ ինչպէս ընդհանուր ձգողութիւն մը (կրափիթասիոն մը) աշխարհքիս նիւթական մասը կը շարժէ :

Բնածններնուս մէջ ենթադրած ենք որ մենք նիւ-

Թաղաչտ ( մաթէրիալիսթ ) չենք , այսինքն մենք նիւթէն զատ բան մ'ալ կ'ընդունինք , որուն կ'ուզեն աննիւթ , կ'ուզեն միտք , կ'ուզեն բանաւորութիւն , կ'ուզեն հոգի անունը տան , ինչպէս որ նիւթին ալ կ'ուզեն մարմին , կ'ուզեն զանգուած , կ'ուզեն ուրիշ անուն տան : Երկականութիւնը ( տիւալիզմ ) ինչպէս փիլիսոփայութեան մէջ՝ նոյնպէս շատ գիտութեանց մէջ կայ . ինչպէս Բնագիտութեան մէջ ալ , օրինակի համար ելեքտրական երևոյթները մեկնելու համար երկու տեսակ ելեքտրականութիւն կը դնեն՝ Գրական ու Ժխտական : Մենք ալ աս երկականութեան սկիզբին հետևելով գուցէ կրնանք շատ մը բարոյական ու պատմական երևոյթներ մեկնել ազգային հորիզոնին վրայ :

Այս յառաջաբանը ընելէն ետև անմիջապէս այս խնդիրը առջևս կ'երէ թէ Քաթոլիկը Հայ է :

Այս պատասխան տալու համար՝ իմանալու է թէ Քաթոլիկը ի՞նչ է , Հայը ի՞նչ է : Ես համառօտ խօսքով մը կ'ըսեմ թէ Հայը մարմին է Քաթոլիկը հոգի . մէկը նիւթ է մէկալը միտք . որովհետև համեմատ յատկութիւններ ունին . և ես իմ վրաս նոյնպէս կը տեսնեմ ու նոյնպէս ալ կը զգամ : Ինչպէս որ մարմինը յառաջ ստեղծուած է՝ և ետքէն հոգին , նոյնպէս յառաջ է Հայը ետքէն Քաթոլիկը . երկուքն ալ առանձինն պատմութիւն , փոփոխ ազդեցութիւններ ու գաղտնիքներ ունեցած են : Բայց յայտնի է որ ասոնք իրարու հետ մէկտեղ կրնան ըլլալ՝ թէպէտ դարձեալ գաղտնիք մըն է միաւորութիւննին , ի վերայ այս արմենայնի աս աշխարհքիս մէջ մէկտեղ ըլլալնին բնական է : Ուրեմն մէկը Քաթոլիկ ըլլալով Հայ կրնայ ըլլալ և ի հարկէ այնպէս ըլլալու է , ինչպէս որ մէկը Հայ ըլլալով Քաթոլիկ կրնայ ըլլալ և ի հարկէ այնպէս ըլլալու է (°) : Հոս կը յարմարի արդեօք քրիստոնէութեան Հիմնադիրին խօսքը՝ Հոգին է կենդանարար , մարմին ինչ որ օգնէ :

Հիմա մէկէն Քաթոլիկ մը իր Հայութիւնը մտ-

նախով միտքէն պիտի անցընէ որ Աւրեմն ես հոգի եմ՝  
 եղեր ու Հայր մարմին : Ահա շատ զգածմունքներու  
 դպչելու եզրակացութիւն մը . բայց այնպէս չէ . գա-  
 հավիժել ալ պէտք չէ . նախ որ խնդիրը քաթովիկու-  
 թեան ու հայութեան վերացընելու ըլլանք նէ շատ  
 կը փոխուի . կրօնի ու ազգայնութեան գաղափարներ  
 կը ծնանին , զորոնք իրարու հետ շփոթելու չէ , սրով  
 հետև քաթովիկ կայ որ քաթովիկ չէ , հայ կայ որ հայ  
 չէ . ինչպէս՝ քաթովիկ կայ որ հայ է , քաթովիկ կայ որ  
 հայ չէ . հայ կայ որ քաթովիկ է , հայ կայ որ քաթովիկ  
 չէ : Երկրորդ՝ հոգին ալ մարմինն ալ , նիւթն ու միտքն  
 ալ մէկ Արարչի մը ձեռքէն ու շունչէն ելած չե՞ն .  
 երկուքն ալ իր յարգն ու վախճանը ունի , երկուքն  
 ալ անմահ են ըստ իմիք : Բայց մէկը մէկալին կրնայ  
 զոհուիլ , և կամ ո՞րը աւելի մեծ յանցանք է՝ Քաթու-  
 լիկութիւնը Հայութեան զոհելը , չէ նէ Հայութիւնը  
 Քաթովիկութեան : Ասոր պատասխանը միայն Քաթու-  
 լիկ մը կրնայ տալ : Բայց ինչո՞ւ համար հոգին մարմի-  
 նէն ազնիւ կը սեպենք և կամ միտքը նիւթէն վեր կը  
 դնենք . վասնզի առջինով է որ երկրորդը կ'ըմբռնուի .  
 ուստի և երկրորդին գոյութիւնը առջինէն կախուած  
 է . հոգի չըլլայ նէ՝ մարմինը ո՞ր կը մնայ . միտք չըլլայ  
 նէ՝ նիւթին ո՞վ նիւթ կ'ըսէ : Ստեղծողը ինծի այս մար-  
 մինը տուաւ , հայ մարմինը կազմելու ատեն վրան  
 քաթովիկ հոգին փչեց . ուրեմն Քաթովիկ ըսուածը  
 կ'ուզէ Գրախափն մէջ ըլլայ կ'ուզէ Գրախափն դուրս .  
 կ'ուզէ մեղաւոր ըլլայ կ'ուզէ անմեղ՝ միշտ Քաթովիկ  
 Հայ մըն է , որովհետև անով ( քաթովիկութեամբ ) իր  
 հայութիւնը կ'ըմբռնէ ու կը ծանչնայ՝ ինչպէս հոգւով  
 մարմինը կ'ըմբռնուի ու կը ծանցուի . անով իր հայու-  
 թիւնը կը սիրէ ու կը յարգէ՝ ինչպէս հոգւով մարմինը  
 կը սիրուի ու կը յարգուի . անով իր հայութիւնը կ'ազ-  
 նուացնէ՝ ինչպէս միտքով նիւթը կ'ազնուանայ , անով  
 իր հայութիւնը կը պահէ ու կ'երջանկացընէ , ինչպէս՝  
 որ հոգւով մարմինը կը պահպանուի ու երջանիկ կ'ըլ-

լայ . անով վերջացէս մի և կատարեալ կ'ըլլայ՝ ինչպէ՞ս հոգւով մարմինը մի և կատարեալ էակ մը կը ձևացընէ :

Աս ըսածներնուս օրինակներ , նկարներ , փաստեր ու ապացոյցներ ( պատմական , տրամաբանական , մեթաֆիզիքական , բարոյական , կրօնական , զգացողական . . . ) անպակաս են :

Միութեան մը կորուստը կենդրոնի մը պակասութեան էն , կամ կենդրոնի մը տկարութեան էն յառաջ կու գայ . ուր որ կենդրոն չկայ՝ որմէ անհատները ձգուին՝ անշուշտ անհասները ձգողութեանէ զրկուած կը ցըռուին . նյնպէս ուր որ կենդրոնը տկար է՝ անհասներուն վանողականութիւնը աւելի ըլլալով պէտք է որ իրարմէ հեռանան : Ազգային կենդրոն մը կամ միութեան կէտ մը թէ՛ ներկայով ( ֆիզիքայէս ) և թէ՛ յիշատակով ( բարոյապէս ) ազդեցութիւն ունի և երբեմն ալ ապագայով ( կարողապէս ) ալ կ'ազդէ . վասն զի ազգ մը կրնայ ներկայ զօրութեամբը ապրիլ , կրնայ անցած համբաւովը ապրիլ , կրնայ ապագայ յուսով մ'ալ ապրիլ . և եթէ աս երեքով մէկտեղ ապրելու ըլլայ՝ ահա կատարեալ գերազանցապէս ( բար էքսէլանս ) կեանք մը ունի կ'ըսուի : Կրնայ ըսուիլ որ մեր ազգը իր ներկայ կրօնական—քաղաքական կեանքին մէջ աս երեքն ալ ըստ իմիք ունի և չունի՝ ուրիշ ազգաց հետ համեմատելով : Մեր անցած պատմութեանը մէջ Հայաստան՝ Հայկ մը , Արշակ մը , Բագրատունի մը , Հայկազեան , Արշակունեան , Բագրատունեան , Հեթանոս , Հեթանոս—Քրիստոնեայ ու Քրիստոնեայ կենդրոններ կը ներկայացընէ : Ասնք արևուն շրջանին հետ մաշեցան ու սպառեցան . առջինը իր կուռքերուն հետ մէկտեղ ծերացաւ ու ինկաւ , երկրորդը իր կուռքերուն և կիրքերուն հետ ինկաւ մեռաւ , ու երրորդը իր կիրքերուն հետ մեռաւ անհետ եղաւ :

Հայկազունք Ասորեստանեայց հետ ինկան .

Արշակունիք Պարսից հետ ինկան .

Բագրատունիք Յունաց հետ ինկան .

Աստիք ինչո՞ւ ինկան, պատճառախնդիր պատմու-  
 թիւնը ասոր պատասխանը՝ անոնց բարոյականութենէն  
 հանելով տուած է. երբ նիւթը միտքին վայ վերա-  
 գունութիւն մը կը ստանայ՝ ահա իր բնութեանը հար-  
 կէն իր ստորնագոյնն ալ խօսն հետ քայքայման կը ձը-  
 գէ : Բայց այն Արշակունեաց կամարին վայ՝ որն որ  
 իրաւամբ Հայաստանի Վենդանակամարը կամ Զսթիա-  
 կոսը կրնայ կոչուիլ՝ որուն վայ հայ ոգին իր շնչանը  
 կ'ընէր՝ նոյն կամարին վայ կ'ըսեմ՝ երկու հատ աչքի  
 զարնազ կզղկացեալ կէտեր կը տեսնուին՝ որոնք հայ  
 պատմութեան յիշատակարաններուն մէջ երկու լու-  
 սալից գոհարներու պէս կը պահուին : Առսաւորիչն ու  
 Սահակը՝ իրարմէ հարիւր սարի ետքը հայ հորիզոնին  
 վայ երևնալով՝ մէկը հայ մարմինը ոգեւորելու ասեն՝  
 մէկալը անոր կատարեալ կերպը տուաւ : Աստիք իրենց  
 անսակ մը արարչագործութիւններնուն ջահը ս'ը բու-  
 ցէն, ս'ը հնոցէն, ս'ը արեւէն դողցան, պատմութիւնը  
 կ'ըսէ որ մէկը Հռոմէն ու մէկալը Աթէնքէն կամ Աս-  
 տանդնուպոլիսէն : Աս ջինին հրաշագործութիւններուն  
 ատենը կ'երեւայ թէ Հայոց արեւն ալ Առիւծին աստե-  
 ջատան վրան էր, այն առիւծի պէս Տրդատ մը ունէր  
 Հայաստան իր ծոցին մէջ, որն որ իր դիւցազնական  
 պէր Հռոմի ասպարեզներուն մէջ կրթած ու վարժե-  
 ցուցած էր : Ո՛հ, ի՛նչպէս, այն հոգեւից Գրիգորը և  
 աս ջգալից Տրդատը տեսնելով և իրարու հետ միաու-  
 րեալ տեսնելով՝ կրնայ ըլլալ որ հոգւոյն մարմնոյն հետ  
 միաւորիլը միտքս չիմայ : Ահա հայ կատարեալ, ահա  
 այր կատարեալ, որն որ Հայաստանին հետ ամուսնա-  
 նալով՝ Սահակոյ, Մեսրոպոյ, Վարդանայ, Վահանայ,  
 Ղևոնդայ և Ներսէսներու պէս որդիներ ծնաւ : Աստիք  
 իրենց աշկերտներովը մէկտեղ Յունաց ընդհանուր  
 կամ կաթողիկէ ոգւոյն մէջ սնանելով՝ Հայաստանի  
 համար միաւորիչ տարրներ ըլլալու ատեննին՝ ուղղա-  
 փառ կաթողիկէ ոգւոյն հրաշակերտները մեզի ձգե-  
 ցին. (նոյն ատենները Յոյնք՝ որոնք ինչպէս երբեմն

Պարսիկք և անկէ յառաջ ալ Ասորեստանեայք՝ հայ ազգին ճակտին գիրերը կը գրէին՝ դեռ յաւիտենական Քաղքին հետ յարաբերութեան մէջ էին և իրենց ճշմարիտ կտթողիկէ ոգին՝ որով և իսկաւ բարոյակաւ նութեան մը ոգին չէին կորսնցուցած) :

Յայնք Հռոմէն բաժնուեցան, բարոյականութիւնն ինն ակարացաւ, սղտիկցան, ինկան : Իրենք Ասիակէն քաջեւրու ատեննին՝ իրենց հետ իրենց ետեւէն Հայերն ալ ձգձգեցին : Յունաց ձգած աւերակները Բագրաւատնեաց աւերակներուն ճամբայ բացին : Բայց հոս դարձեալ զարմանալի երևոյթ մը կը տեսնուի : Խնչ ոգի էր ան Ռուբենեան ոգին որ Հայաստանի աւերակներէն յառնելով՝ Յունաց ձգած աւերակներուն վրայ կըցաւ կեանք մը ցուցնել : Ռուբէն, ան բու Տաւրոս լեռան վրայ շինած անակդ՝ մահմէտական ահագին ջրհեղեղին գէմ պաշտարանող թու մըր սփ շինեց : Ահլուն, բու գլխոյդ թագն հիւսողը սր բարերար ձեռքն եղաւ : Բայց վայ, ասանք օտար երկրի մը՝ բարձրագաւառ Հայաստանի բոյս ըլլալով՝ Արիկիայի հողին վրայ անկարելի էր որ մշանջենաւ որ բեղմնաւորութիւն մը ստանալին (թէպէտ այնչափ տեսականութիւննին ալ զարմանալի և մանաւանդ թէ հրաշալի էր) : Ռուբենեանք ծառի մը վրայ բուսնող ու աճող բոյս մըն էին՝ որ ծառին չորնալովը բնական էր որ չորնար : Սակայն չէր կրնար արգեօք դարձեալ այս բոյսէն կենդանի սերմ մը Հայաստանի բարձրագաւառներուն վրայ թռուչիլ (կ'ուզէ զեփիւռի մը կամ մորիկի մը թևերուն վրայ, կ'ուզէ մեղուի մը թաթիկներուն մէջ կամ աղաւնիի մը կտուցին մէջ) : այո՛ այո՛, ինչու չէ : կրնար գուցէ եթէ քրիստոնէական ոգին հոն բեղմնաւորութեան յարմար ըլլար, եթէ խափանւած չըլլար կտթողիկէական բարոյականը, որուն կրթութիւնը սոյնպէս միաւորիչ ու պահպանիչ է, որ ամէն բանին գոյութիւնը անարատ կը պահէ, և որն որ ինչպէս բարոյականը կրօնէն չիբաժներ նէ՛ նոյնպէս հոգին մարմինէն



չիբաժներ : Ո՛ր Հայաստանի Երեմիան , ս՛ խորենեան  
 Երեմիան , թող հիմա որ ես ալ քեզի հետ վայրիկ մը  
 ընկերանամ լալու ու ողբալու Հայ ոգւոյն կորուսար  
 ցուրտ դիակի մը վրայ : Ո՛ր մենաստանը Հայաստանի ,  
 եթէ ուղղափառութեան ոգւով կրթուելով նոյն ոգւ-  
 ւով հայ մանկութիւնը կրթելու ըլլայիք , անշուշտ մե-  
 ջերնիդ անմահ Բենեդիկտոսներ , անմահ Բաւրսեցի-  
 ներ ( Ս . Վէնտան սը Բոյ ) կը ծնանէին : Ո՛ր եկեղեցիք  
 Հայաստանի , եթէ ուղղափառ ջերմեռանդութեամբ  
 վառւած՝ նոյն եռանդեամբ ձեր երիտասարդներն ու-  
 երիտասարդութիւնը բորբոքած ըլլայիք նե՛՛ հիմա հայ  
 Օգոստինոսներով , հայ Թերեզիաններով ( մանաւանդ  
 թէ բնիկ Գայիանէներով ու Հռիփսիմէներով ) կը պար-  
 ծէինք : Ո՛ր վարդապետք Հայաստանեայց , եթէ կաթո-  
 ղիկէ եկեղեցւոյն ողջախոհ հուրը և ուսումնասէր բո-  
 ցը ձեր սիրտերը յափշտակելով՝ հայ կղերն ալ ամբիծ  
 շուշաններու մէջ և պարտաւ ճարակներու վրայ իր  
 հօտը հովելու ըլլար , այն ատեն մէջերնիս ս՛չ Քաս-  
 վիէներ , ո՛չ Ագուստինացիներ , և ոչ Գարգեոսիոսներ պա-  
 կաս կ'ըլլար , ոչ միսիոններ , ոչ վարժարաններ , ոչ  
 կարողութիւններ ( Ֆաբիւլթէ ) կը պակսէին : Ո՛ր նա  
 խարաք Հայոց , խօսքս ձեզի է , դուք հայ ազգին մէյ  
 մէկ կենդորսներն էիք ( մեզք որ դուք կենդորսն մը չու-  
 նէիք ) , դուք եթէ ուղղափառութեան ճշմարիտ առա-  
 քինութիւններովը զինեալ , ու խիստ բարոյականով  
 զարդարեալ , աւելի քիչ անձնասէր , աւելի քիչ զիւ-  
 րասէր , աւելի քիչ շահասէր , և աւելի շատ ազգասէր ,  
 աւելի շատ բարեպաշտ , աւելի շատ անձնուրաց ըլլա-  
 յիք նե՛՛ այն ժամանակ արեւմտեան ասպետներու պէս  
 անմահ կ'ըլլայիք , Թրուպատուրներ , Թաստոններ ձեր  
 համբաւը կ'երգէին կը հաչակէին , մանաւանդ թէ նոր  
 Գողթաններ կը ծնանէին զձեզ արեւու նմանցընելու  
 համար . ձեր բերդերը ձեզի բանտ չէր ըլլար . թշնա  
 միէն չնեղելու համար՝ արեւմտեանց պէս՝ ծովեր անց-  
 նելու հարկ չիտր . ձեր թշնամին ձեր ոտքին տակն էր .

գլուխը ձեր ժայռերուն տակ կը խաթէր . ս'հ , արդեօք  
 հոս դարձեալ ի՞նչ կ'ընէ հարկաւոր էր որ այն օձին  
 գլուխը ձղմելու համարձակի : Ասոր՝ տարակցոյ չկայ :  
 Ո՛հ չայք , նիւթական միութիւննիգ պակսելու ասեն՝  
 եթէ կրօնական միութեան մը գիծելու բլայիք . այն  
 միութեան՝ որն որ միայն ուղղափառ քաթողիկոսութեան  
 մէջ տեսած եմ , Արեմուտքի Գաղղիացիք չէք բլար .  
 ձեր իշխան նախարարներն ալ մէյմէկ Մուրճ չէի՛ն լը-  
 լար այն վիշապին գլխուն՝ որն որ Արիան կրեց և Եւ-  
 բոսոսան ալ կլալու վրայ էր՝ երբ իր բոյնին մէջ հեղ մը  
 խաչակիրներէն ջախջախելով՝ հեղ մ'ալ մէկ մասը Ա-  
 լըսարիայի դաշտերուն վրայ ուղղափառ թուճի մը վը-  
 րայ զարնուելով ու մէկալ մասը Գաղղիայի հարաւու-  
 յին դին ուղղափառ Պիւրէնեանց վրայ խորտակելով՝  
 իր սահմանը հոն գտաւ՝ ուր իրմէ տկար բարոյակաւ  
 նութիւն մը նշմարեց : Հոս խօսքերնիս ժամանակաւոր  
 ( առ ժամանակեայ ) յաջողութեանց և չաջողութեանց  
 վրայ չէ : հապա համեմատաբար աւելի անողութիւն  
 ունենալու վրայ , որն որ մօտ է մշանջենաւորութեան ,  
 որն որ ընկեր է յաւիտենականութեան , որն որ դուստր  
 է ճշմարտութեան , որն որ պէտք է որ աստուածային  
 ծնունդ մը ունենայ : Հոս մէկը կրնայ զարմանալ ու  
 ըսել թէ՛ ինչո՞ւ ուրեմն այնչափ նուազ ճշմարիտ կը-  
 րօններ , նուազ բարոյական տէրութիւններ այսօրուան  
 օրս դեռ կանգուն կը կենան , նոյն իսկ ոմանք ուղղա-  
 փառութենէն պաշարած մնալով , Ես կ'ըսեմ՝ նաև որ  
 կրնայ ուղղափառ տէրութիւն մը քաթողիկ ազգ մը  
 ժամանակ մը եղձանիլ կամ դադրիլ . ժամանակ մըն  
 ալ կրնայ յունադաւան տէրութիւններ յոյն ազգե-  
 րու հետ մէկտեղ բարգաւաճիլ , ժամանակ մը բողո-  
 քական տէրութիւններ բողոքական ազգերու հետ մէկ  
 տեղ բարգաւաճիլ . բայց ետքէն . . . կը յանդգնիմ  
 ըսելու՝ առանց մարգարէ բլալու՝ ամէնքն ալ պէտք է  
 որ կամ փոխուին և կամ կործանին . լուսաւոր ճշմար-  
 տութիւնը չէ թէ միայն խաւարին ստութեան կը յադ-

Թէ՛ հապա աղօա ճշմարտութեան՝ ճշմարտանմանութեան ալ պէտք է որ յազթէ՛ եթէ Աստուած բարձրակ ճշմարտութիւն է, եթէ աստուածային Նախահամարութիւնը մարդկային հանձարէն գեր ի վերայ է, եթէ հոգին առաւել է քան զմարմին: Այսօրւան օրս երկու տերութեանց միա դնենք, մէկը Գաղղիա մէկաղը Անգղիա. առեն մը պիտի գայ որ Անգղիա կամ պիտի փոխուի և կամ կործանի, իսկ Գաղղիա ան առեն կրնայ կործանիլ երբ կը փոխուի: Անտարակոյս հոս ոմանց միաքը Հռոմայ վրայ պիտի դառնայ, որն որ 19 դարեան ամենէն հին և ամենէն տեղական տերութիւն մըն է, որուն պատմութիւնը աշխարհքիս յիշատակարաններուն վրայ ամենէն շքեղ տեղը բռնած է, որուն իշխանութիւնը ամենէն աւելի տարածողական է, որուն տղգեցութիւնը ամենէն աւելի սփռողական է, որուն գոյութիւնը ամենէն աւելի յաւիտենականութիւն մը կը ցուցնէ, թէպէտ նայն գոյութիւնը պատմութեան մէջ ոմանց համար քանի մը անգամ ջնջուած պիտի ըլլար (և մեր օրերուն մէջ երկու տարի յառաջ արդէն կործանած ջնջուած չէնք մը կը համարուէր), Բայց ամենէն աւելի ողբալի (կամ աւելի ծաղրելի) միտքերը անոնք են՝ որոնք կը կարծեն թէ Հռոմայ օրասերը ինտրով՝ քաթոլիկութեան հոգին ալ մեկէն իր մարմինը կը ձգէ՝ այն քաջ դիւցազին պէս՝ որն որ քաղաք մը պաշտպանելու առեն՝ քաղքին առնուիլը տեսածին պէս՝ թշնամեաց խաղալիկ չլլալու համար իր սուրին վրայ կ'իյնայ: Ես իմ արեւելեան հասար միաբալս Անգղիայի ամենէն նուրբ միտքն ալ կատակելու կը համարձակիմ, որն որ օգի պէս կը ցնդի կ'անցնի, եթէ իմ մտքս ալ կ'անցնի, սակայն Հռոմ կը մնայ, եթէ Հռոմ չմնայ՝ քաթոլիկութիւնը Հռոմէն մեծ ու սքանչելի Հռոմ մըն ալ կրնայ կողմել. սս իմ համոզումս աս իմ հաւատքս երկու հարիւր միլիոն ձեռքերու մէջ դրած եմ մի կարծէք: Արտաշէսի մը զօրքին նման մէյմէկ քար ձգելով

կազմուած լեռներուն վրայ չեմ գրած իմ յոյսս՝ հա-  
պա ան լեռները շարժող ու փոխադրող ուղղափառ  
կաթողիկէ (բուն Քրիստոսեան) հաւատքին վրայ : Հոս  
չմտնամ զրուցելու որ քաթողիկութեան միայն սաղիի  
կողմը կը մտածենք կոր, և կամ միայն իր անցաւոր  
յաւիտենականութեան վրայ կը խօսակցինք կոր, և  
նանց յաւիտենականութիւնը մեր խօսակցութեանը  
նիւթ չենք ըրած :

Ի՞նչպէս չսիրեմ այն քաթողիկ հոգին՝ որն որ ճիշդ  
Քրիստոսին հոգին է, ուստի և ատուածային է, գե-  
ղեցիկ է իր ծննդեանը մէջ, զորաւոր է իր երիտասար-  
դութեանը մէջ, բազմածին է իր այրութեան մէջ,  
անմահ է իր ծերութեանը մէջ : Սակայն կը սիրեմ նաև  
հայ մարմինը, որն որ կրնայ Քրիստոսի մարմին ըլլալ,  
կրնայ նաև գեղեցիկ, զորաւոր, բազմածին ու անմահ  
ըլլալ : Ահա մէկէն ազգասիրութիւնը մտքս կու գայ :  
Ազգասիրութիւն մը կայ՝ որն որ անձնասիրութենէն  
ծնունդ կ'առնու կամ ուրիշները ատելուն համար ի-  
րենները կը սիրէ, կամ իր շահը իրեններէն է, հոգա-  
գործութեան վիճակէն ելլելով՝ անմիջապէս հողէն  
ատողներուն չի կրնար վերանալ և ծանօթ բարեկամ  
ազգական ձեռքերու՝ իր ընկերներուն միջնորդութեա-  
նը կը կարօտի. կամ փառասիրութեան տենչանքէն  
ծնունդ կ'առնու, մտքը գալով իր նախնիներուն քա-  
ջութիւնը և այն քաջութիւնը իրեն սեփականելու  
համար ազգասիրութեան կը դիմէ, կամ մէյմ'ալ կայ  
որ բնածին երախտագիտութեան զգածմունք մըն է,  
որ չ'ուզեր իր հայրերէն առածները մոռնալ. և կամ  
միայն նիւթական կիրք մըն է՝ իր հարցը տնկած ծառը  
չտրցընելու : Աերջապէս կայ ազգասիրութիւն մ'ալ  
որն որ առաքինութիւն է միանգամայն. այս ճշմարիտ  
ազգասիրութիւնը իր սեփական շահը իր դիւրութիւնը  
մոռնալով՝ իր ազգին շահին ու դիւրութեանը կը զու-  
հէ, որ է ըսել անհատականութիւնը ընդհանրակա-  
նութեան կը ծառայեցընէ՝ համոզուած ըլլալով որ

անհատները կը մեռնին կ'անցնին, իսկ ընկերութիւնը կը մնայ և կրնայ անմահ ըլլալ: Ահա այս ազգասիրութիւնը ինչ յարաբերութիւններ ունի ուղղափառ քաթողիկոսութեան հետ. կրնայ արդեօք ըսուիլ որ ազգերնիս իր ազգային գիտակցութեանը քաթողիկներու ձեռք հասած է:

Մենէն աւելի ընդհանուր գաղափար ունեցող հոգին՝ կարծեմ թէ ամենէն աւելի տարածւած հոգին է. կաթողիկէ ընկերութեանը տարածութիւնն ու տարածականութիւնը՝ կարծեմ թէ արևուն ճառագայթներուն պէս ամենուն աչքին մէջն է (միայն կոյրերուն չէ): Ես առաքինի ազգասիրութիւնը միայն սիրելու՝ առաքինութիւնը ազգասիրութենէն բնաւ չեմ կրնար բաժնել. բայց առաքինութիւնը զո՛հ մըն է, որն որ այնչափ մեծ է՝ որչափ որ հոգին կը վառի կը բորբոքի ինք իրմէ կ'ելլէ կը ծաւալի՝ և բովանդակ երկրագունը երկրորդ մթնոլորտի մը պէս պատելու ատեն՝ դէպի երկինք դիմելէն չիզադրիր: Ամենէն աւելի մոլութիւնները (որոնք ըսած զոհերնուս խեղդիչ մուխը կրնան համարուիլ) սանձող ու կիրքերը (որոնք կրնան ըսած զոհերնուս ցրուիչ հովերը համարուիլ) աղնուայընող կրօնը անշուշտ քրիստոնէութիւնն է. բայց նոյն քրիստոնէութեան մէջ ալ ամենէն աւելի ճիշդ ու խիստ առաքինութեան վարդապետութիւնը (տոկմա) և ամենէն աւելի փափուկ զգածմանց ու սրտաշարժ տեսարաններու և սիրալիր յաղթութեան կրկէսները ես միայն ընդհանուր ուղղափառ քաթողիկոսութեան մէջ գտած եմ: Ո՛ ազգասէր հոգի իմ, որ դաշտերուն մէջ պիտի դիմես որ չմոլորիս, որ աղբիւրներուն քով պիտի շրջիս որ չպապակիս, որ պարտէզներուն մէջ պիտի հանդչիս որ յաւիտեան զմայլիս: Ո՛ ազգասէր միտք իմ, արևելք թէ արևմուտք պիտի դիմես փնտռած կեանքդ ուժդ ու անմահութիւնդ գտնելու համար: Ո՛ ազգասիրութիւն, ես զքեզ կրնամ մինչև աստուածաբանական առաքինութեանց ծոցին մէջ նետել, և դուն

ալ զիս կը ստիպես որ ըսեմ. Անժողովոյ միտքին անխա-  
 փախ համազուճներ տուողը միայն ու զղարհաւ կաթօղիկ  
 կէ հանգանակն է. յուսալից հոգւոյն ամենէն աւելի  
 ծաղկալից դաշտեր ցուցրնողը՝ ու զղարհաւ կաթօղիկէ  
 պատմութիւնն է. սիրալից սրտին ամենէն աւելի եղ-  
 բայրասէր զգածմունքներ ազգողը ու զղարհաւ կաթօ-  
 ղիկէ քահանայութիւնն է. Ասոնք մեծամեծ ճշմար-  
 տութիւններ են՝ որոնք մեծամեծ հաստորներու կը կա-  
 րօտին: Քայց մենք մեր խօսքէն շատ չհեռանանք. մենք  
 մեզմէ ալ շատ չհեռանանք, մենք մեր ժամանակէն ալ  
 շատ չհեռանանք: Կոր դարու պատմութեան մէջ առ-  
 բեւո՛ւս համար՝ հին ու միջին դարերը թող տալով՝  
 կը տեսնենք որ ազգերնիս նոր դարու շրջանին մէջ  
 մանեւրու ատեն՝ իր բախտին փոքրիկ աստղն ալ իր մա-  
 րը մտնելու վրայ էր. նոր պատմութեան համար ազգը  
 խիստ տկար էր. հեղեղ մըն էր վրան վազեց. ո՛ր Ա-  
 բարաւ Մասիս չկար որ վրան դիմէ. այն փրկաւէտ  
 լեռներուն ոտքէն հեռացած էր ազգը. այլիքները զար-  
 կին նայն ազգին մարմինը՝ որուն անդամները խորտակե-  
 լով արեւելք երեւմուտք, հարաւ հիւսիս ցրուեցին,  
 որոնք կամ այն հիւրասեաց կամ հիւրասէր եղերքնե-  
 րուն վրայ ընդաւազեալ թաղւեցին և կամ օտարաբոյս  
 բնութիւննին մտնալով անկակից համարարոյ ձեւա-  
 նային պիտի: Արգէն ազգը թագուհւոյ մը գիրկէն  
 գայլերէն յափշտակող մանկան մը նման՝ ստիպուած  
 էր իր հայրենի դաշտերէն հեռանալով իր ազգայնու-  
 թիւնն ալ մտնալու և իր գիտակցութեանէն հրաժա-  
 րելու, որովհետեւ շրջակայ դաշտերու մէջ կամ քլիմա-  
 յին խորշակ ու ցուրտ օգէն կը թաւմէր կ'իյնար ու  
 անտերմ կը թաղուէր, և կամ քաղցրագոյն օգարած-  
 նի մը հանգիպելով՝ գեղեցկագոյն բայտերու քով կը  
 ստիպուէր պատուաստ ընդունելու՝ որով քանի մը  
 յաջորդութենէ ետեւ իր սերմը փոխելու. և կամ բա-  
 րեխաան գօտիի մը մէջ իյնալով՝ իր մթնոլորտը իրմէ  
 զօրաւ որ զօրութիւններով առողջուած չըլլար նէ՝ յա-

բոբերական կենդանութիւն մը կը ցուցնէր՝ որն որ  
 ուրիշին կեանքէն կ'իւսած ըլլալով՝ չէր կրնար պար-  
 ճո-ի-ն մը ունենալ, այսինքն կ'անցնէր առանց տես-  
 նուելու, կ'ապրէր առանց զգալու, կը գործէր առանց  
 վայելելու, կը դիմէր առանց հասնելու. ո՞ տարտամ  
 վիճակ, ո՞ անյատակ անդունդ: Ասանկ ճգնաժամներ  
 (բրիզ) շատ ազգեր ունեցան՝ թէ՛ առանձնակի և թէ՛  
 հաւաքապէս. երբեմն բովանդակ Եւրոպա հիւսիսային  
 սառուցեալ ծովուն մէջ պիտի թափուէր ու խզու-  
 էր. երբեմն ալ մինչև Ափրիկէին աւազեղէն անապատ-  
 ներուն մէջ պիտի սքսորուէր: Ստոյգ է մեր վրայի  
 ներկայ մղումը այսչափ սաստիկ չէ, գոնէ նիւթապէս՝  
 եթէ բարոյապէս չէ նէ: Հոս անգութներէն ոմանք  
 ազգին ծոցին մէջ անբուժելի վատահամբաւ հիւան-  
 գութեան մը հեաքերը կը նշմարեն, այսինքն թորացա-  
 լի (վերէմի). սակայն ես ալ իրաւունք չունիմ նայն  
 ազգին ծոցին մէջ թորացաւ մը տեսնելու տեղ՝ նայն  
 ազգը թորացաւով վարակեալ ծոցի մը մէջ տեսնե-  
 լու. ո՞ բարերար մէթոս, ո՞ բարերար գրութիւն (սիւ-  
 թէմ). բժիշկներուն գիտողութեան համաձայն՝ եր-  
 բեմն թորախտացեալ մօր մը ախար մէկ զաւկին կ'անց-  
 նի մէկալին չ'անցնիր, երբեմն ալ սերունդ մը կը ցաւ-  
 կէ, և այլն: Հիւժեղ մը մաշէլ մը կը տեսնենք կոր ու-  
 րիշին վրայ. վախ մըն ալ կայ մեր վրայ. բայց ես կը  
 կարծեմ թէ մարմնոյ և արեան ձայնին մտիկ չընելով՝  
 միայն հոգւոյն ազդեցութեանցը ու մտքին գիմողու-  
 թեանցը անսարով կրնանք յուսոյ խորիստ մը գտնել:  
 Հոս բժշկական դպրոց կամ կարողութիւն (ֆաքիւլթէ)  
 մը բանալու տեղ առաքինութեան դպրոց ու կարո-  
 ղութիւն մը բանալու ենք: Այս միայն առաքինու-  
 թիւնը կը գտնենք՝ որն որ կրնայ հաստատական օգ-  
 նութիւն մը ընել, և որուն ազդեցութիւնը այնչափ  
 զօրաւոր է՝ որչափ զուտ, մաքուր, սուրբ, երկնային,  
 աստուածային է նէ: Այն ինձ, որչափ անգէտ կ'ըլլան  
 ընդհանուր պատմութեան մեր ժամանակին հայ երի-

տասարդները՝ եթէ կարծելու ըլլան որ կրնան կրօնով իջ  
 շորս միլիան աղբ մը վերայիշեալ վիճակներէն հանել  
 ու Մասիսին բոլորովիքը շարել, ինչպէս Նաբոլէոն մը  
 աղբերը իր դրօշին բոլորովիքը կրցաւ նէ (°) շարել: Ե-  
 թէ շինծու կամ գողունի առաքինութեան մ'որ դի-  
 մելու. ըլլան՝ Բրամէթէոսին արեւուն անիւէն գողցած  
 լուսոյն պէս, անշուշտ Արամեոզ մը կը գտնուի՝ որ  
 անոնց աղիքներուն մէջ անգղի մը կտուցը խօթէ. ե-  
 թէ այն աստուածք կարծածնին ալ Բանտորս մը (Ա-  
 մենագարգէ մը) տակըծելու ըլլան, անոր ձեռքին մէջ  
 ալ այնպիսի տուփ մը կը դրուի որուն գոյ մնալը ան-  
 կարելի ըլլալով՝ կեռ մը հետաքրքրութիւնն ալ բա-  
 լահան է բանալու և ծածուկ շարիքները խայտառ-  
 կելու: Հոս իմ կողմնակիցներէս մէկը պիտի կանչէ.  
 Այն, այն, այն տուփին աակ Զոյար իբրև դիրտ շմանց:  
 Ես ալ նայն յոյսը կը գրկեմ ու կը սիրեմ: Նախասնա-  
 մութեան եօթնճառագայթեայ աչքը երկինքին եօթն-  
 երորդ շջանակին մէջ չեմ դրած, անոր աղգեցու-  
 թիւնը արեւուն եօթնդունեան ճառագայթներուն  
 հետ խառն մեր մթնոլորտին մէջ ու մեր երկրին վրայ  
 ալ կը դիտեմ: Մի կարծէք որ անձինս տախտակը նա-  
 լակոծութենէ ազատ է. իմ բազուկներս ալ երկինք  
 վերայուցած եմ, իմ աչքերս տապաններուն ուղղած  
 եմ, փրկուէս ասաղիկ մը փնտաւելու վրայ. բայց չեմ  
 ուղեր ալ ինքզինքս խաբել. ուրիշները խաբող թա-  
 փառական լոյսերը՝ որ երբեմն երկինց կամարին վրայ  
 կը սրանան ու կ'անհետանան՝ հեռու ըլլան, գողունի  
 ճառագայթներն ալ սրտէս դնէրս ելլեն. կրից յլի և  
 ուռուցեալ ամպերը ցրուին երթան՝ որպէս զի այն  
 աստուածային առաքինութիւնը տեսնեմ, որուն մարդ-  
 կային սիրաբ սիրահարուելով՝ անոր հետ ամուսնանայ  
 ու աղգասիրութեան օրինաւոր ծնունդը յղանայ: Ա-  
 րեմն աղբասիրութիւնը կրօնէն բաժնելը՝ առջինին  
 թի երբ կարել է, որով միայն կրնայ սողալ բայց չի  
 թա չիր. դարձեալ կ'ըսեմ՝ առաքինութիւնը աղգասի-



բուժենէն բաժնեք՝ բռնաբարու թիւն մըն է՝ որուն  
 դէմ բովանդակ մարդկային պատմութիւնը կը բողբէ,  
 նոյն իսկ մարդկային սիրան ալ շիւանիր, որովհետե  
 ամէն պատմական ճշմարիտ ազգասէրք առաքինի էին  
 և առաքինութենէ զուրկ ազգասէր մը կասկածելի է :  
 Ըսէ ինձի հիմա, ս՛քաթողիկ եղբայր, ո՞ր կրօնին մէջ  
 աւելի առաքինութեանց ծաղիկներ բացւած կը տես  
 նես, ո՞ր կրօնին մէջ աւելի առաքինութեանց ասպա  
 րէզներ բացւած կը գտնես. ո՞ր կրօնը աւելի առաքի  
 նի զիւցաղներ ունի և զիւցաղներ կը ծնանի. ո՞ր կրօ  
 նը աւելի առաքինութիւնը կ'անձնաւորէ և ճերմակ  
 կտաւներու ու համեստ քօղերու տակ կը ծածկէ, եր  
 բեմն գափնիներով երբեմն թեկերով կը զարգարէ .  
 ո՞ր կրօնը աւելի առաքինութիւնը կը սրբացուցանէ ու  
 կ'աստուածացուցանէ : Ո՞ր կրօնը աւելի անփոփոխ ա  
 ւելի գրական է, ո՞ր կրօնը աւելի քիչ տարտամ ծը  
 նունդներ ունի. կ'ուզես նէ փնտռէ նաեւ թէ ո՞ր կը  
 րօնը աւելի զգայուն, աւելի սիրուն, աւելի ճարտա  
 սան, աւելի բանաստեղծ, աւելի փիլիսոփայ և աւե  
 լի աստուածաբան է : Եւ ո՞ր սիրան է որ ասանկ հարս  
 մը չփնտռէ իր եղբօրը համար : Ես ալ անանկ կրօն մը  
 կը փնտռեմ՝ որն որ կարող է իմ նախնեացս ցրուեալ  
 անդամալոյծ մարմինը ժողովել ու ոգեւորել, շինել ու  
 շխտել : Եթէ Աստուած մը ասոր կարող է նէ՝ աստ  
 ուածային առաքինութիւն մըն ալ կարող է, ուրեմն  
 ամենէն աւելի առաքինի և կամ գոնէ ամենէն աւե  
 լի առաքինութիւն պահանջող ու ցուցնող և նոյնը  
 սիրող ու պաշտող կրօնն է՝ որուն գիրկը խնալու եմ  
 որ դժբախտ ներկայէն ու տարտամ ապագայէն ազա  
 աիմ : Ահա կաթողիկէ ու զղափառ կրօնը իմ փնտռածս  
 է, որովհետեւ հոն եթէ ուրիշ բան չեմ սորվիր նէ՝  
 գոնէ ընդհանրութեան գաղափար մը կ'ունենամ, մի  
 ութեան ճիշդ իտեան կը գտնեմ, սրբութեան օրինա  
 կը կը տեսնեմ, զօրութեան վայրկեանը կ'իմանամ. ա  
 հա իմ կաթողիկէ մի և սուրբ կրօնս՝ ազգասիրու

Թիւնս ալ կը զօրացնէ, կը սրբացնէ, կը միացու-  
 ցանէ ու կ'ընդհանրացուցանէ: Ես զիս թող տալով՝  
 ու բիշին վիայու թեանը նայինք. մեր ազգային պատմու-  
 թիւնը ասոր պզտի մէկ փորձը կամ օրինակը կամ ման-  
 րանկարը (մինիաթուրան) իր հեղեղին հայլին մէջէն կը  
 ցրւացնէ: Եթէ Լուսաւորիչ մը, Սահակ մը, Ներ-  
 սէս մը սմանց աչքերուն լուսէն խիստ հեռու ինալով՝  
 անազօտ չեն կրնար նէ տեսնել թող աչք ընին Սեբաս-  
 տացի օրտոսանայ մը վրայ դարձնեն, որն որ մեզմէ  
 միայն մէկ ու կէս դար հեռու է: Ար պատանին ալ  
 նաւաբեկութեան մէջ իր բազուկներուն հետ աչք-  
 ները երկինք վերցուցած ասող մը կը փնտռէր. այս  
 առաքինի ազգասէրը, այս հայազգի աստեղաբաշխ մու-  
 զը բեթղէհեմեան փրկարօր ասողը Յաւիտենական  
 քաղքին վրայ կեցած նշմարեց, և իր ծոցին մէջ յղու-  
 ցած առաքինի ազգասիրու թիւնը ծածկելով՝ հռոմէս-  
 կան կրօնին մնորին մէջ իր ապաստանարանը և միջ-  
 թարութիւնը գտաւ և իր ս'րելի ճառերները Ազրի-  
 տիան ծոցէն Հայաստանի ծոցը խրկեց. ահա յաւիտե-  
 նական յիշատակարաններով վաւերացած պատմական  
 ստուգութիւն. ահա միանգամայն քաթոլիկ հոգւոյն  
 ընդհանրականութիւնը, ասրածականութիւնն ու բա-  
 րերարութիւնը մէկէն կը զգացուի Միսիթարի մը՝ ու զ-  
 զափառ մենակեցի մը ձեռնարկութեանը մէջ: Ազգին  
 մէջ միայն գերութեան ու փառասիրութեան խաւարն  
 ու լոյսը խառն պլլղղուտ ատեն՝ տես սա քաթոլիկու-  
 թեան հնոցին հազարգուտը ջահին ազդեցութիւնը՝ որ  
 ձեռքէ ձեռք անցնելով՝ մէկ միսիթարեան ու միսիթա-  
 րիչ արեղայէ մէկային փոխազրուելով՝ լուսաւոր ու  
 լուսալից ազգասիրութեան քարոզները լսելի կ'ըլլան  
 անչէն անապատներու, անապատ աւերակներու և ա-  
 ւերակ սիրտերու մէջ, ազգը կը գրգռի, կը գրգռի,  
 կ'արթննայ, շունչ մը կ'առնու, կը զօրանայ կը քա-  
 ջալիբուի, և մեծամեծ կոթողներու բիրամիաներու ա-  
 տաղձ կը պատրաստէ: Ա՛վ է որ հոս չդիտէ նաև ուղ-

միայն հոն կը գտնեմ այն վստահութիւնը՝ զորն որ  
 աշկերտ մը կրնայ ունենալ և պէտք է որ ունենայ իր  
 վարպետին անկեղծութեանը վրայ : Հին փիլիսոփանե-  
 րը , մարդկային ազգին հին կրթիչները ( Պլատոն , Ա-  
 րիստոտել , Պիւթագոր . . . ) բան մը գիտէին երբ  
 իրենց աշկերտներէն միայն հաւտալ կը խնդրէին , ա-  
 մենէն առջի դասերնին անոնց Աւթուէֆա ( նա ասաց )  
 ըսել տալն էր : Եթէ մարդկային կամ եւրոպական  
 հանձար մը վերոյիշեալ փիլիսոփաներէն բարձրագոյն  
 թուիչ մը չկրցաւ փորձել նէ՝ թող տեսնեն ու զար-  
 մանան տեսնելով որ ուղղափառութիւնն ալ իր գաւ-  
 տիարակութեան ու կրթութեանը մէջ միշտ հաւտա  
 որ սորվիս կամ գիտնաս կ'ըսէ , և նոյնը իրաւամբ կ'ը-  
 սէ և գիտակցութեամբ կ'ըսէ և անկեղծութեամբ կ'ը-  
 սէ : Բնական է որ մարդ կրթութիւնն ետև ազատ ըլլայ ,  
 որովհետև կրթութիւնը միշտ կոսող մը կ'ենթադրէ .  
 անկիրթը իր ազատութիւնը թէ՛ ինք իր և թէ՛ հասա-  
 րակութեան վնասին միայն կը դորձածէ : Ինչպէս ան-  
 հասին նոյնպէս է ընդհանուրին նկատմամբ . երբ ազգ  
 մը կրթութիւնն յառաջ իր ազատութեամբը վարել  
 կ'ուզէ նէ՝ իր բնական ու բարոյական յառաջադիմու-  
 թեանը առջին խորին խրամ մը բացած կ'ըլլայ : Չպար-  
 ծին անոնք՝ որոնք կը կարծեն որ ազգային տղաքը կրթ-  
 նան կրթել՝ կրօնին սանձովը ղրերնք կապելէն յառաջ :  
 Բայց ներկայ ժամանակիս մէջ ամէն տեսակ կրօնով ,  
 ամէն տեսակ բարոյականութեամբ կրթելը անսարքեր  
 բան մըն է՝ այն աշկերտներու համար՝ որոնք եթէ սյ-  
 սօր մէկ դպրոցի մէջ , մէկ քաղքի պատերուէն մեջ ,  
 մէկ տէրութեան մը սահմանին մէջն են նէ՝ վաղը շատ  
 դպրոցներ , շատ քաղաքներ , շատ տէրութիւններ պի-  
 տի տեսնեն , ասոնց համար կեղծելն ալ պարաս մա-  
 նաւանդ վնասակար է : Այն սկիզբն ալ ընդունելի չէ  
 որ ամէն մարդ իր հօրը մօրը կրօնին մէջ մեծնալու  
 կրթութեւն է . ( այն ժամանակ մարդկային սեռը ետ  
 ետ քաշելով մինչև անսպասներու որջերը և ան-

տասներու խորշերը դիմելու է) : Այս սկիզբը ընդու-  
նազը կամ ծոյլ է և կամ խաբեբայ (չեմ՝ ըսեր անկը-  
բօն , անհաւատ , անտարբեր . . . ) : Ի՞նչ , եթէ մե-  
կուն բարիք մը պիտի ընեմ նէ՝ ամենէն լուազոյն ա-  
մենէն կատարելով միջոցը ընտրելու չեմ . եթէ մարդ  
մը ստեղծելու առ իժ մը արուելու ըլլար նէ՝ ամենա-  
գեղեցիկ մարմնոյն ամենագեղեցիկ հագի մը չեմ տար :  
Ուրեմն կրթել ուզողն ալ անանկ հիմ մը դնելու է՝  
զորն որ պատմութիւնը գործածած , փորձած , և դա-  
րերու յաղթող ու անխախտ ցուցուցած է : Ո՛հա-  
յաստան մայր մեր , դուն շիտակ խօսէ , որ զաւկընե-  
րուդ վրայ աւելի արցունք թափած ես , որո՞նք աւելի  
բեղի միտիթարութիւն եղած են , քու որբեւարիու-  
թեանդ ատենը զաւկընեքէդ որը իր հայրենի արախն  
մէջ աւելի անմշակ հող ձգած է . վայ ինձ , այն կոշտ  
զանգուածը արդեօք քու արցունքներուդ հեղեղովը  
պիտի ախօսանայ : Երբէք քու սգալից քօղդ մեկդի ը-  
նելով՝ քու մայրենի ժպիտովդ մեր ճակատին համբոյր  
մը տալով՝ քու ուրախութեամբդ զմեզ ալ պիտի չու-  
րախացընես , ահա մեր ճակատները բայ են , շրթունք-  
նիս ալ պատրաստ է . . . բայց ըսէ մեզի թէ ասկէ  
ետե քու մանկուկդ որ դայեակներուն , որ վարժոց-  
ներուն պիտի յանձնես . . . : Երանի՛ ձեզի , քաթու-  
րիկ մանկուկ , որովհետեւ ձեր դաստիարակութիւնն  
ու կրթութիւնը ամենաապահով սկզբամբ կը սկսի և  
ամենաապահով միջոցով կը յառաջանայ , վասն զի  
թէ վարպետներնիդ ներքին համոզմամբ տողորւած են  
ճշմարտախօսութիւններնուն վրայ և թէ դուք մեծա-  
մեծ ու հաստատուն քայլերով յառաջադիմելով՝ ա-  
նոնց ճշմարտախօսութեանը ապացոյց ըլլալու ատեն՝  
մեծամեծ ճշմարտութեանց ապացոյց կ'ըլլաք :

Վճենագիւրին արամաբանութիւն մըն է հաստա-  
տելը թէ՛ Ամենամեծ լուսաւորութեան ու ամենա-  
մեծ յառաջադիմութեան դարուն մէջ՝ ամենախիստ  
բարոյականութիւն մը միայն կրնայ՝ եզրները անցնող

ամենի աղերներու թուամբ մը բլլալ: Ահա ամենէն աւելի քաթողիկոս թեան բարոյականութիւնն է որ իր խտու թեամբը թշնամի աչքերուն սլոք մը կու գայ. և նոյն խտու թիւնը կը տեսնենք որ Նախախնամութեան մէկ գործքովը քրիստոնէից թուլութեան ստուկու թեանը հետ ուղիղ համեմատութեան մէջ է: Բարերանը հաւասարակչութիւն, որն որ միայն կաթողիկէ ճշմարիտ եկեղեցւոյն մէջ շարունակ պատմութեան հետ վերահաստատուելու վրայ կը տեսնեմ, և ասով իր հաստատունն ու կայունն գիրքը պահելը կը հետեցընեմ: Աւրեմն ասանկ դարու մը մէջ եթէ կը տեսնեմ որ բարոյականութիւն մը ուղղափառ կաթողիկէ բարոյականութեանէն փոքր ատիճանաւ մ'ալ նուազ է՝ հետեցութիւն անմիջապէս որ անոր տուածն ալ (կրթութիւն, արժ, գեղեցիկութիւն . . .) յառաջագիտութեան համեմատ չէ, միշտ խախտուա կողմ մը վախու վայրկեան մը ունի, իջնալու սուղելու միտած է, ներկայ պատմութեան մէջ տարտամ դոյութիւն մը կը ցուցնե՝ հեազհեաէ իր մեջը տկարացող մասին դէմ դորացող մաս մը չկրնալով յարուցանել: Ենթադրենք որ ասանկ նուազ բարոյական մարմնոց մը գէմ՝ յարձակում մը պատահի. անշուշտ (եթէ նիւթական զօրութիւն կամ յենաքան կամ կենդրոն մը չունի նէ՝ անմիջապէս՝) ետ ետ պիտի քշուի. և սովորիտեր որ եթէ նիւթական պատերազմները աշխարհքիս վրայ միայն ատեն ատեն կը տեսնուին նէ՝ բարոյական պատերազմները միշտ ու շարունակ են. ժամացոյցի մը վրայ անդալալաբար իրար հալածող վայրկեաններուն պէս՝ ազգերը իրար մղելու, կրօնները իրար կլլելու ճիգ ու ջանքի մէջ են. ինչպէս մահմէտականութիւն մը կուպաշտութիւնը կը կլլէ, քրիստոնէութիւնը կուպաշտութիւնը կլլելէն ետե՝ կուպաշտութիւնը կլլողն ալ կը մղէ, նեղը կը խոթէ . . . և նոյն իսկ քրիստոնէութիւնն ալ Նախախնամութեան թոյլութեամբը կը ճգբուի որպէս զի զուտ ի. բայց

պատերազմը կը լմրննայ, չէ . ուղղափառ քաթովիկու-  
 թիւնը յունադաւանութեան և բողոքականութեան  
 դէմ կը քալէ . Եւրոպայի մէջ 140 միլիոն ուղղափառ  
 քաթովիկութեան դէմ 59<sup>1</sup>/<sub>2</sub> միլիոն բողոքական ու 52<sup>1</sup>/<sub>2</sub>  
 միլիոն յունադաւան զինաւորած են . Ամերիկայի մէջ  
 18 միլիոն քաթովիկութեան դիմաց 14 միլիոն բողոքա-  
 կանութիւն կը կենայ : Այսչափ կրօնով տարբեր մարդ-  
 կանց ու ազգաց բարոյականութիւնն ալ պէտք է որ  
 տարբեր ըլլայ ու տարբեր ալ ազդեցութիւն ունե-  
 նայ : Ազգ ազգի կամ թագաւոր թագաւորի հետ միշտ  
 կրնան ներքին միաբանութեան դաշինք մը դնել : Բայց  
 կրօն կրօնի հետ , բարոյականութիւն բարոյականու-  
 թեան հետ բնաւ չեն կրնար ներքուստ դաշնակցիլ :  
 Այս բարոյական կուլին մէջ կարծեմ թէ երբէք բո-  
 ղոքական մը միտքէն չէ անցուցած ( և իրաւունք չունի  
 անցընելու ) կամ սրտէն չէ հաւտացած ( և չիկրնար ալ  
 հաւտալ ) որ բոլոր աշխարհք բողոքական պիտի ըլլայ .  
 նոյնպէս յունադաւանին ալ միտքին ծայրէն չէ անցած  
 անանկ մէկ երազ մը : Ուր որ՝ ուղղափառ քաթովիկը  
 միտքին մէջ հաստատ գրած է ու համոզւած է որ աւ-  
 տենով բոլոր աշխարհք ուղղափառ քաթովիկ պիտի  
 ըլլայ : Թող Արքիմեդէս աշխարհքիս նիւթական զանդ-  
 ւածը շարժող լծակը ( լրվիէ ) գանձելուն վրայ զմայլե-  
 լով Գոսայ ( Ե՛ւրիքա ) կանչէ , ես ալ աշխարհքիս բա-  
 րոյական լծակը գանձելուս վրայ կը պարծիմ . ( քաւ լի-  
 ցի , առ գիւտը քրիստոնէութեան շիմնադիրին գիւտն  
 է ) : Արքիմեդէս իր լծակը կաթնցընելու կէտ մը կամ  
 յենարան մը չէր կրնար գտնել . բայց ես լծակն ալ ու-  
 նիմ յենարանն ալ ունիմ . իմ բարոյական աշխարհքիս  
 լծակը համոզու մը կամ հաւատքն է և յենարանը չը-  
 ում = Քաթովիկութիւն = Ուղղափառութիւն = Ճշմար-  
 տութիւն = Յաւիտենականութիւն : Պատմութիւնն ալ  
 ասոր հետ համընթաց քայլերով կը յառաջանայ : Հոս  
 հիմա երեք չորս միլիոն մը համրող կամ կարծող ազգ  
 մը մեկէն սոք պիտի ելլէ խիղճը զարնելով ու այլոյ-

լերով, և վերջապէս պիտի հարցընելու ստիպուի . Զիտ  
 ո՞ր ալիքը պիտի զարնէ ետ պիտի մղէ . . . և կոնակս  
 թուժերով պատած բանակ մը չունեցած ատենս՝ ար-  
 դեօք պիտի ինձմ, կոխկրտուիմ, ոչնչանամ . . . :  
 Ստոյգ է ասանկ խղճահար խղճմտանք մը՝ ասանկ տա-  
 րակոյս մը Ասիաի մէջ չգանելու ալ ըլլամ նէ՝ լուսա-  
 ւորեալ քաղաքներու մէջ չըջող հայ ոգիներուն վրայ  
 կրնամ ենթադրել : Ասոր պատասխանը քաթովիկ եղ-  
 բայրս ինձի այսպէս կու տայ՝ կ'ուզէ իր կ'ուզէ ուրի-  
 շին բերնէն .

« Կա ալ ասոր վրայ մտածած , փիլիսոփայած , եր-  
 բեմն տարակուսած , երբեմն յուսահատած , բայց վեր-  
 ջապէս քաջալերուած գտած եմ ինք զինքս : Այսչափ  
 կրօնից ու բարոյականու թեանց հեղեղներուն մէջ՝ կրու-  
 նակս Յունականոց թուժի մը տալու ըլլամ նէ՝ անոր  
 ալ հիմը աւազի վրայ է , ոչ հաստատուն ոչ դիմաց-  
 կուն է , և յիշեալ հեղեղին մէջ քարտուելու վրայ  
 է . իսկ եթէ Առանբաշէն թուժի մը կռթնելու ըլ-  
 լամ՝ բոլորովին անհիմն շեղջակուտի մը կռթնած կ'ըլ-  
 լամ , որն որ աւելի քաղաքական բանակ մը կը կազմէ  
 քան թէ բարոյական : Առջինը հաղար տարւան շին-  
 ւածքով ու երկրորդը երեք հարիւր տարւան շինւած-  
 քով հաղար ութը հարիւր տարւան շինւածքի մը առ-  
 ջին՝ երեւակայութեան տկար նուիրականութիւն մը  
 ցուցնելու ատեննին , սրտին ալ տկար բարոյակա-  
 նութիւն մը կը ցուցնեն . քաղաքականութիւնը բա-  
 րոյականութեան ծառայեցընելու աեղ՝ ետքինը առ-  
 ջինին կը ծառայեցընեն . հովական գաւազանը արքու-  
 նի գաւազանին ետեէն կ'երթայ : Ասնք որչափ որ թը-  
 լով սակաւութիւ են նէ՝ անկէ շատ աւելի սակաւ է  
 շնորհքին , և շատ առաքինութեանց ճիշդ և կատար-  
 եալ գաղափարականը ( իտէալը ) կորսնցուցած են՝ ի-  
 րականը չունենալով : Բայց ինչ խօսքս կ'երկնցընեմ ,  
 ես ուղղափառ քաթովիկ հայ ըլլալովս՝ ստոյգ է նիւ-  
 թական զօրութիւնս նուաճած է , ստոյգ է ազգութիւ-

նրա կրնայ կոխկրտաւիլ, իմ մարմինս կրնայ առանց ե-  
 րաշխաւորութեան մնալով երկու սուրի մէջ իյնալ, սա,  
 կայն իմ ընդհանուր անհատականութիւնս, իմ դրական  
 գիտակցութիւնս, իմ ուղղափառ հոգիս անյաղթելի է .  
 կրնամ յարձակումներէ ետ քաշելու ստիպել, բայց  
 կունակս անհիմն, անպատմական թումբերու չեմ տու-  
 ած . նեղը մանկու որ ըլլամ՝ երկու հարիւր միլիոն  
 գիտակցութեան մը բողբոջելով կրնամ ինծի գոնէ զի-  
 նադագար մը ճարել կամ պայմանաժամ մը առնուլ .  
 եթէ գիշերը վրայ հասնելով՝ քանի մը ժամ խաւարի  
 մը մէջ ալ մնալու ըլլամ՝ իմ ջահերս ալ արեւելքի  
 մարած ջահերուն չեմ երկնցրներ որ յուսահատիմ .  
 Իննովկենտիսներու, Գրիգորներու, Բենեդիկտոսնե-  
 րու . . . եթէ ուղեմ Պոսիւէներու, Ֆէնէլէններու,  
 Բապայներու, Շաթոպրիաններու, . . . կը գիմեմ .  
 Ինչ որ երբեմն Լուսաւորիչ Հռոմէն, Սահակու Մեսրոպ  
 Աթէնքէն կամ Կոստանդնուպոլիսէն առին, ինչ որ  
 երբեմն Ռուբենեանը Իսայիլաէն ու Վաղղիաէն կը յու-  
 սային ու կ'առնուին, նոյնը ես Հռոմէն կ'առնում ու  
 Փարիզէն կը յուսամ : Մասիսը իմ սէրս ըլլալու ատեն  
 քաթոլիկ Վաղղիան իմ յոյս է, ուր որ քաթոլիկ Հռոմը  
 իմ հաւատքս է՝ իմ յաւիտենական հոգիս ըլլալով .  
 եթէ ես պիտի մեռնիմ նէ՝ Հռոմը իզմէ յառաջ մե-  
 ռած տեսնելու միտիթարութիւնը կ'ունենամ, երբ ես  
 պիտի խաբւիմ՝ Վաղղիան իզմէ յառաջ խաբուած տես-  
 նելու միտիթարութիւնը կ'ունենամ : Չէ չէ . աթիկա պատ-  
 մութեան գէմ խիստ ազիտութեան նշան մըն է . հոգւայն  
 վրայ մահւան ստորագելիք մը դնելը հակառակափոսու-  
 թիւն է : Ուրեմն իմ հոգիս, իմ բարոյականութիւնս,  
 իմ ազգութիւնս, իմ դատախարակութիւնս, իմ կրթու-  
 թիւնս, իմ յառաջագիմութիւնս, իմ լուսաւորու-  
 թիւնս երկու բեւեռներու վրայ կը դառնան, այսինքն  
 կիրքերս Հռոմի խիստ հարցին մէջ ձգած եմ՝ որ զսուր-  
 ու սրբուի, իսկ իմ բանաւորութիւնս Փարիզի տրեւն  
 տակ գրած եմ որ լուսաւորուի, այն այն, կիրքերես



չյաղթու իմ'նէ փրփու թիւնս կը գտնեմ. բանաւորու  
թեւնէս չմթնեամ' նէ երջանկու թիւնս կը գտնեմ: »

Ընա այս ուղղախառ գաւանու թիւնը 3-4 միլիոն  
Հայու մէջ 80-100 հազար քաթողիկի գաւանու թիւն  
է, որն որ իր մէջը անոր գոյու թեան ու տեղու թեան  
սերմը կը պարուռնակէ: Բայց տարակուսող սգւոյ մը  
առջին աս ալ իր երկիրը չունի՝ արգեօք, այն ունի՝  
իր սկզբան վրայ չէ թէ յառաջանալու: Հապա ետ ետ  
երթալու ասե՛ն, անհրաժեշտ է իր կործանումը եթէ  
իր հոգին ուրիշ կենդորսնի և իր միտքը ուրիշ արեւ-  
ներու գարձընելու բլրոյ: Բայց ես կ'արծեմ' թէ մէկը  
ըմբռնած ճշմարտութիւնը ու սիրած գեղեցիկութիւնը  
չիկրնար մերժել՝ առանց ինք իրեն հետ կ'առելու և  
ինք զինք ոչնչացընելու. մանաւանդ երբ նոյն ճշմար-  
տութիւնը ամենամեծ ու նոյն գեղեցիկութիւնը ամե-  
նաբարի է նէ: Ըսել կ'ուզենք որ քաթողիկ հայը իր  
պատմական գոյութիւնը ապահովուցած է (սիրուը-  
թաւ բրած է) և իր յառաջադիմութեանը երաշխաւոր  
գտած է և իր երջանկութեանն ալ խոստում առած  
է: Ասկէ ուրիշ մ'ալ պիտի հեռուցընէ որ նոյն քա-  
թողիկ հայուն գիմարը կ'ամ քովք գանուող ուրիշ հայ  
մը՝ որուն մարմինը յառաջ միտքը ետև է, ինք արև-  
մուտք կը քալէ՝ աչքը արևելք կը գարձընէ, իրմէ  
տկարագոյն բարոյականութեան մը վրայ կ'ընած կը  
յառաջանայ, իրեն հաւասար բարոյականութեանց հետ  
գաշնակից նիզակակից կ'ըլլայ՝ բայց առանց փոփոխ ե-  
րաշխաւորութեան (սոլիտարիթէ), իրմէ զօրաւոր բա-  
րոյականութեան առջին կը խուսափէ, լոյս չտեսնելու  
ատեն մէջքը կը կորացընէ, ազատութիւն գտածին պէս  
անասնձ կ'արշաւէ, տղազային մէջ բնաւ կ'ընող մը չի  
նշմարէր, ներկային մէջ բանաւոր յոյս մը չունի և  
անցեալին մէջ միայն աւերակ կը տեսնէ, երբ բարոյա-  
կանը քաղաքականին հետ չի՛հիւսեր, կրօնը ազգին հետ  
չ'ամուսնացընէր, հապա ետքինը սիրելու ասե՛ն առ-  
ջինը չատելու չոփ առաքինութիւն ունի, վերջապէս

հայ մը՝ որ հոգեւորը կ'աշխարհականացնէ, կամ աշխարհականութենէ հոգեւորականութեան (նիւթէն հագւոյն) բարձրանալու կը յանդգնի՝ Բաբելոնեան աշտարակ շնող հսկաներուն պէս, հովերը փշելու, երկիրը շարժելու, լեզուները միտքերը խառնուելու սկսածին պէս՝ երբեմն տեսակ մը (անվաւեր և աներաշխաւոր) բարոյականութեամբ ապրողը՝ անկէ ետեւ տեսակ մը կանոնադրութեամբ (կամ սահմանադրութեամբ) ապրելու սրոշում կուտայ (վերայիշեալ աստուածներուն Բանտորան՝ Ամենապարզիւր միտքի բեր) . . . վայ ինձ, ասոր վախճանը, ասոր ապագան : Իմ հետաքրքիր միտքս, չկշտացող հոգիս միայն անցեալով միայն ներկայով դո՛հ չըլլար, ապագային անդունդն ալ կ'ուզեմ մտքիս մէջ սղմեցնել՝ թէպէտ գիտնամ որ հետաքրքիր ուսումնականին պէս Աեսուվին անդնդախոր կսկորդին մէջ ծռելու նայելու ատենս կրնայ ըլլալ որ զլուխս դառնայ . չէ չէ, միայն ես չեմ այն անխահեմ հետաքննին բնագէտը, սրուն հետաքրքրութիւնը այնչափ կ'աւելնայ որչափ որ զինքը պատող ծուխին ու մշուշին թանձրութիւնը կ'աւելնայ : Եթէ ասանկ ծխալից անդունդի մը մէջ նայելու ատենս՝ եղբօրս ուրուականը (ման) աչքէս կորսնցուցի նէ՛ ճամբուն վրայ խոտորելուն պատճառաւ, ս'հ ինչպէս կրնայ աչքքս եղբօրս հետ համամիտ համախորհուրդ չեղող ուրուականի մը ետեէն հասնիլ՝ որն որ իր ճամբուն մէջ կը յառաջանայ, աս երկու իրարու հակառակ գաղափարներս՝ երկուորեակ զաւկըներուն պէս՝ միտքիս մէջ իրարու հետ կը կռուին, մէկը իր ճամբուն վրայ ետ ետ երթալովը կը կորսուի ու մէկալը յառաջ երթալովը կը կորսուի, արդեօք ասոնք հոգւոյն ու մարմնոյն հակառակ յատկութիւններն են :

(Հա իմ հորիզնս, իմ գիտակցութիւնս, իմ խղճմտանքս բաւական պարզեցի . թո՛ղ ուրիշը ինչ որ ուզէ մտածէ, ես քաթովիկութիւնը սահմանելով ստորագրելով՝ ուրիշ դաւանութեան կամ դաւանութեանց

հետ բաղդատել, անոր ճշմարտութիւնը ասոնց ստու-  
 թիւնը, անոր հնութիւնը ասոնց նորութիւնը, անոր  
 գեղեցիկութիւնը ասոնց ոգեղութիւնը, անոր յաջող  
 ազգեցութիւնը ասոնց ձախորդ ազգեցութիւնը, անոր  
 արդիւնքները ասոնց ստուերները, վերջացէս անոր  
 յաւիտեանական ու ասոնց ժամանակաւոր, անոր ստու-  
 ուածային ու ասոնց մարդկային ըլլալը ցուցնելու  
 ձեռք չղարկի, ես քաթողիկութեան ջատագովութիւն  
 (աբղոժէթիք) մը գրելու չյանդգնեցայ (ասոնք մե-  
 ծագոյն հանձարներու գործ է). ես միայն քանի մը  
 ուղղափառ մտմտութիւնքս յայանելու զեցի. և գիտեմ  
 որ ինծի շատ անուններ պիտի ասն. բայց ես կ'ուզեմ  
 սլախը հայուն գէմ քաթիլ ըլլալ, անտարբեր հա-  
 յուն դէմ իխք քաթողիկ ըլլալ, անհաւատ հայուն  
 դէմ օճիք քաթողիկ ըլլալ: Գարձեալ եթէ մէկը ըսե-  
 լու ըլլայ որ Ան ամեն ըսուածները զգածմունք (սան-  
 թիման) մըն է ուրիշ բան չէ. ան ատեն կարճ պա-  
 տասխան մը կու տամ որ՝ Զգածմունքը կիրք (բասիօն)  
 մը ըլլալով՝ ահա ես այն ամենամեծ, ամենահարուստ,  
 ամենագեղեցիկ և ամենափափուկ և այն իմ խելքս  
 յափշտակող կիրքին կուստաշուն եմ ըսելովս՝ որ տրա-  
 մաբանուէ և որ խղճմտանքին դէմ մեղանշած կ'ըլլամ:

Ոմանց մտմտութիւն ալ չանիրաւելու համար՝ խո-  
 սակցութիւննիս շարունակներ: Ոմանք կը մտածեն որ  
 Հայոց աս կողման փրկութիւնն ու երջանկութիւնը  
 երկու բաժիններուն միաստութեամբը գուցէ կրնայ  
 յաջողիլ, գեղեցիկ մտածութիւն, բայց խառն մտա-  
 ցածին գրութեամբ: Ի՞նչ, չորս միլիոնի մը մէջէն հար-  
 իւր հազար մը պակտելով՝ որ է ըսել քառսունիս մե-  
 ջէն մէկը ելլելով՝ ամբողջը կրնայ մտանգի մէջ խնայ.  
 զորաւոր է նէ կը տկարանայ, բարի է նէ կը շարանայ,  
 մեծ է նէ կը պղտիկնայ, կրթեալ է նէ անկրթ կ'ըլ-  
 լայ, լըսաւոր է նէ կը խաւարնայ, բնաւ ոչ: Իսկ ե-  
 թէ միանալու ըլլայ, անշուշտ երեսունու իննին մէջ  
 մէկը պէտք է որ կորսուի աւանց ազգեցութեան մը

նոյց (բարոյապէս խօսելով), ուրեմն ազգը միաւորու-  
 թեամբ ալ պէտք է որ միշտ նոյն զօրութիւնը, նոյն  
 բարութիւնը, նոյն մեծութիւնը, նոյն կրթութիւնը,  
 նոյն լուսաւորութիւնը պահէ: Հաս գուցէ իխառ քա-  
 թովի մը ըսէ. քաթովիութեան և չքաթովիու-  
 թեան մէջ՝ քանակութիւնները որակութեանց հետ  
 ճիշդ խոտորնակ համեմատութեան մէջ են: Ասիկայ  
 միայն քաթովիքը կրնայ ընդունիլ, մէկտղին բանին  
 ձեռք չիտար. ուրեմն եթէ կաթիլ մը սոբի (սփիրիթօ)  
 թակոյցի մը ջուրը չի կրնար նէ յագեցընել և կամ հիւ-  
 լէ մը կամ անհատ մը բազմասրտիկ հիւլէներու կամ  
 անհատներու հետ միաւորելով նոր մարմին մը չի կըս-  
 նար նէ կազմել՝ պարագ է ենթադրելը որ Եջմիածնաւ-  
 կանը կամ Հռոմէականը բանաւորապէս ուղէ Հռոմէ-  
 ականին կամ Եջմիածնականին հետ միանալ էրբ լուս-  
 ւոյն արգիւնքի կամ արտագրեալի յոյս չկայ: Նիւթական  
 միաւորութիւն մը ասկէ աւելի բան մը չի կրնար ը-  
 նել: Ուստի Հոյքը հայ մնալով աս միաւորութեանն  
 բան մը չի վաստիկիր, քաթովիքը քաթովի մնալով ա-  
 նով ամէն բան կը կորսընցընէ: Բայց թէ որ միաւո-  
 րութեան տեղ միաբանութիւն դնելու ըլլանք, որն որ  
 փոփոխութիւն մը կ'ենթադրէ՝ այն ատեն միանալն ալ  
 բանաւոր ու օգտակար կ'ըլլայ: Կ'ուղէ՞ Եջմիածնակա-  
 նը փոխուիլ, անիկայ իր գիտնալու բանն է. կ'ուղէ  
 Հռոմէականը փոխուիլ, անիկայ անխելի է (ինչոյէս  
 վերագոյն խօսակցութիւններէն յայտնի է). հռոմէա-  
 կանը փոխուելու ատեն՝ միայն անտարբեր կամ ան-  
 հաւատ կրնայ ըլլալ: Բայց ասանկ չէ Եջմիածնականին  
 համար, որն որ աս նկատմամբ անտարբեր է, և կամ  
 որչափ որ քաթովիութիւնը իրմէ հեռու է նէ՝ ինք  
 այնչափ քաթովիութեան մօտ է. փոխուիլը իր գի-  
 տակցութեանը և գոյութեանը չի գուշիր, միայն անձ-  
 նասիրութեանը կը դուշի: Բայց յատկապէս խօսելով իր  
 փոխուիլը փոփոխութիւն չէ. ինչո՞ւ, վասն զի ինք քաթու-  
 լիութեան մէջ պէտք է որ աւելի բան մը տեսնէ՝

որն որ Ի-Ի-Ի-Ի-Ի-Ի-ն չկատարածներ՝ հայտա յա-Ի-ը-ած կու տայ . կը հարստացընէ չաղքացըններ , կը գեղեցկացընէ չագեղացըններ , իր ընելիքը վերջապէս խորհրդագաւոր ամուսնութիւն մըն է՝ որն որ աւելի շնորհք և ոյժ կու տայ՝ քան թէ ամուլ տկարութիւն : Բայց հոս աստուածային խորհուրդ մը մեր միայրը կ'ընկճէ , և Նոթախնամութեան թող տալու կը ստիպուինք աւանակ մէկ պտտմութիւն մը՝ որուն գաւազանը միշտ իր ձեռքին մէջ բռնած է : Սակայն մենք որ հիմա միայն մարդկորէն կը մտածենք ու մարդկորէն կը խօսակցինք կոր , մեզն համար շատ կարելի աշխարհքներ կան , շատ կարծիքներ ու ենթագրութիւններ կը ներուին : Դարերնուս լուսաւոր խորշերուն մէջ երբ տմանք կը քարոզեն որ ալ կրօնափոխութիւնը վատահամբաւ եղած է՝ կ'իմացուի որ ազիտութեամբ խաբուելով աւմենալաւէն լաւագունին , լաւագունէն լաւին , լաւէն միջակին , միջակէն քէշին անցնիլը ալ անկարելի է բարոյապէս . բայց յետոս ընդդէմ՝ կարելի գտիլի և հարկաւոր է : Ասանկ աստիճաններու մէջ դէպ ի վար խաբուողները՝ այսօրւան օրս դէպ ի վեր ուղղուելու վրայ են : Ամենէն հանճարեղ ու իմաստուն ուղղափառ անձերը և ազգերը թող տալով՝ եղանակաւ մը Անգղիաի գահլիճներուն , պաշտօնարաններուն , համալսարաններուն , եկեղեցիներուն մէջ մտիր , մինչև Բալմերսթաններու և Թագուհիներուն ներքին սենեակը մանելու հնարք մը գտիր և ծածկապէս հարցուր և այնպէս հարցուր որ կարենաս սպաստիսան առնուլ , հարցուր թէ Նրե՞նց կրօնը չէ՞ նէ կաթողիկէ կրօնը վեր կը սեպեն , իրենց բարոյակամութիւնը չէ՞ նէ մէկալինը աւելի կը համարին , և այլն . բողոքական Գերմանացիներուն ալ մօտեցիր . Լայպնիցի նման գլուխներուն գանգերը զննէ ( եթէ Ֆրէնտրոթիէ կը հասկընաս ) , նոյնպէս ասոնց ներքին համոզումը՝ ուղղափառ քաթողիկութիւնը կրօններու թագուհին ու բարոյականութեանց ծայրը ճանչցած ըլլալուն վրայ

դուն ալ կը համոզուիս : Ինչ՞ուր բեմն, պիտի ըսես, ասոնք ամենքն ալ մէկէն չեն դառնար քաթոլիկ ըլլար : Ասոնց համար ան կ'ըսեմ՝ ինչ որ դուն ալ Առթեբերին համար կ'ըսես, որն որ Խոստովանութեան խորհուրդը մինչև երկինք բարձրացընելու ատեն՝ ինք խոստովանանք չէր ըլլար և խոստովանահայրերն ալ հրացաւ նով կ'ընդունէր : Համամիտ եղբայր, եթէ կրնաս նէ հեղ մը չհամախոհ հայ նուիրապետութեան շղթային ետքի օղակէն մինչև առջի օղակը ել վերացիր, մինչև Էջմիածնայ աթոռ հասիր, և մանաւանդ հոն նստողին աւելի մօտեցիր, մտիր անոնց ներքին խուցերուն մէջ, երախնին շօշափէ, դէմքերնին զննէ (եթէ Ֆիլիոկիտ միէն կը հասկընաս նէ), երբեմն բերնեքնէն փախչող, երբեմն գրիչներնէն սպրդող բառերը խօսքերը ժողովէ և կը տեսնես թէ քաթոլիկութեան վրայ ինչ համաւրում ունին (կենթագրուի որ վրանին տենդ չեղած ատեն) : Հոս արդեօք Ընկերին կնիջ շնախանձելու պատուիրանը այլաբանօրէն տեղի ունի՞ . յիշեալ նուիրապետութեան անյարիր անդամները՝ անմիաբան և երերեալ ձայնով մը Ձերքինը ձեզի ըլլայ ըսելու ատեն նին՝ կը հասկըցընեն որ սիրտերնին ամուսնութիւն մը ըրած է մէկ բանի մը հետ՝ որն որ իրենց համար չէ . արդեօք հոս շատ մը Ազգահարգանի Թուղթեր պէտք են . (կը վախնամ որ քիչ մ'ալ յառաջ երթալու ըլլամ իմ խօսակցութեանս սահմանը կ'անցնիմ, դու ա կրօնական խօսակցութեանց նուիրական սահմանին մէջ ոտք կոխած կ'ըլլամ) : Ես այս միայն կ'ըսեմ, և այս միայն կ'իցնայ ըսելու թէ խիստ անբանաւոր է մտածելը որ Քաթոլիկը կրնայ Էջմիածնական ըլլալ . բայց ասոր հաւկառակ խիստ բանաւոր է և իրաւացի այն խորհուրդը որն որ կ'ենթագրէ թէ Էջմիածնականը ուղղափառ Քաթոլիկ պիտի ըլլայ, որն որ ոչ ժամանակիս հակառակ է և ոչ պատմութեան, հապա բնական յոռաշարժի մոթիւն մըն է : Հոս դարձեալ մարդուս ձեռքէն դաւաղանը կ'առնուի ու բնութեան Տիրոջը կը արուի,

որն որ մեզի Արդոսեան աչքեր ալ տուած ասեն՝ միշտ իր Նախախնամութեան ծածուկ խաղերը ունի, որոնց լուծումը մեր կարողութենէն վեր է: Բայց մարդկային միտքը Աստուծոյ պատկեր մը ըլլալուն՝ միշտ իր նախանկար օրինակին պէս գործունեայ ըլլալու է՝ այն աշխարհքներուն մէջ՝ որոնք իր իշխանութեանը սակ ձգւած են: Երբեմն մեծ գլուխներ քովէ քով գալով՝ Բողոքականութիւնը Քաթոլիկութեան հետ միաբանելու համար մարդկային հնարքներ մտածեցին, շատ յատակագիծներ հանեցին, ասանկ ալ շատ Քաթոլիկներ և շատ Եջմիածնականներ ճեղքեալ աղգը միաբանելու ջանքեր ցուցուցին. (ո՞վ է որ չսիրէ ասանկ սրբատերու միաբանութիւն մը). բայց առջևնին շատ դժուարութիւններ ելան, անանկ տարրներու հանդիպեցան՝ որոնց անմիջական ուղղակի միաւորութիւնը անկարելի էր. անանկ զգածմունքներ տեսան՝ որոնք բնաւ իրարու խնամութիւն չունէին. անանկ միտքեր նշմարեցին՝ որոնք բնաւ իրարու նմանութիւն չունէին. անանկ համեզումներ գտան՝ որոնք իրարու Ղրականի և Ժխտականի յարաբերութիւն ունէին. անանկ ճշնունդներու պատահեցան՝ որոնք իրարու հետ այնպէս կը կուռէին՝ ինչպէս Եսաւ Յակոբին հետ. վերջապէս Քիմիաի մէջ տեսնուած այն օտարազգի մարմիններուն պէս՝ որոնք միայն երրորդի մը ձեռօք իրարու հետ կրնան միանալ՝ հոս ալ երրորդ մը կամ միջնորդ մը գտնելու հարկ եղաւ: Բայց այն երրորդը մի և նոյն ժամանակ երկուքին ալ չկրնալով մօտենալ կամ մէկուն մօտենալու ասեն մէկայը հեռու մնալուն համար՝ բռնու չկրցաւ բաղադրութիւն մը կազմել: Ո՞մանք ալ մտածեցին որ նախ քաղաքական միութիւն մը կազմեն և ետքէն ալ կամայ կամայ բարոյական, կրօնական և ազգային միութիւնն ալ կը յաջողի: Բայց բանը ան է որ արդեօք հոյ ազգը կամ ազգերը քաղաքական գոյութիւն ունին. ասիկայ տարաամ խնդիր մըն է. հոս Ոլրատիասին Բիզոններուն գրած թուղթերուն

սկիզբը նկարած պատկերը միտքս կ'իյնայ, (բխումք թէ նէաթիս). բարեկամք, ես իմ ծիծաղը կը բռնեմ: Բան չկայ, շատ խոտայններ իրականի փոխուած չէ՞ն մի, և մարդ պահասու որ բլլալուն համար ալ խորհելու ձեռնարկելու չէ՞ մի. շատ անգամ բնութեան մէջ զարտուղութիւններ ալ կ'ըլլան և շատ անգամ մարդուս վաղք մը ցատքում մը փորձելու իշխանութիւն ալ տրուած է: Շատ անգամ պզտի պահանջողութիւն (բրէթասիոն) մը մեծամեծ կալուածներու տէր եղած ունի: Գեռ ու բիշ շատ միութեանց տեսակներ կամ միութեանց սկզբնաւորութիւններ կրնան երևակայուիլ կամ ըլլալ. Ընտանեկան (Փամիլիայի) միութիւն, Գարբոցական միութիւն, Ժողովական միութիւն, Գիտնական միութիւն, Արուեստական միութիւն, Շուկայի, Զբօսարանի, Թատեր միութիւններ, և այլն և այլն: Միութիւն ու միաբանութիւն մը թող ըլլայ, ուսկից և ինչպէս կ'ուզէ սկսի, թող մանանխոյ հատը ինչայ՝ ո՞ր ձեռքէն որ կ'ուզէ նէ ինչայ. եթէ սագի մը ձայնը Կապիտոլիոն մը կ'ազատէ նէ՝ ո՞ր մարդկային ձայնն է որ կ'արհամարհուի: Սակայն միշտ պարարտ հող մը, մտադիր ակունջ մը կ'ենթադրուի:

Ըստ ալ չմտնալու է որ ազգը նախ հողուով ետքէն մարմնով բաժնուած է. բնական է որ միաւորելու առան ալ նոյն կարգը պահէ: Եւ կարծեմ թէ իր բարոյական տկարութիւնը՝ ուղղափառութենէ ուղղակի բաժնուելէն չէ սկսած, հասրա տկարանալովը անկէ կերպասպէս հեռանալու ստիպուեր է, և բարեբախտութեամբ կեդրոնախոյս զօրութեան մը դէմ կենդրոնաձիգ զօրութիւն մը դիմացը ելեր իրեն մէկ մասին յետախաղաց մղում մը տուեր է: Ես ի սկզբան ըսի. երակներուս մէջ հայ արիւնը չըլլու տոտեն՝ ըզեզիս մէջ քաթոլիկ ոգին իր աթոռը դրած է. ես միշտ Աթթիլաներու դիմաց Ղևոններ կը տեսնեմ. Կայսրներու Թագաւորներու մէջ (Միջինդարեան)՝ Իննովկենախոսներ կը նշմարեմ. Եկեղեցիներու մէջ Ս. Պետրոս աչբիս



կը զարնէ . Թագերու մէջ Եռադաստիկը կը յարգեմ ,  
 Քաղաքներու մէջ Հռոմը կը սիրեմ : Ո՛ր Հռոմ՝ Եւ-  
 րոպայի օրէնքներ տալու ատենդ՝ Հայաստանի մ'ալ  
 չէ՞ս կրնար օրէնք մը ճարել . Եւրոպա մը կրթելու ա-  
 տենդ հայ մանկալին ալ չէ՞ս կրնար դաստիարակել . աչ-  
 խարհք լուսաւորելու ատենդ՝ Հայաստան մը չէ՞ս կր-  
 նար լուսաւորել . երկիրը երկինքիդ հետ միացնելու  
 ատենդ՝ հայը հայու հետ չէ՞ս կրնար միաբանել : Այս  
 այն . Եւրոպա իր քաղաքականութիւնը քեզմէ տեսաւ  
 սորվեցաւ . քու Կանոնադիրքերդ իր Օրինամատեան-  
 ներուն ծնունդ տուին . քու նուիրապետութեանդ  
 վրայ Եւրոպայի տիրապետութեանց կարգը ձեւեցաւ .  
 քու երեսփոխանական կարգադրութիւններեդ (էնս-  
 թիթիւսիան) ազգերը իրենց սահմանադրութիւնները  
 (գոնսթիթիւսիան) կերպաւորեցին . վերջապէս երբ  
 քու ծնունդդ , կարողութիւնդ , իշխանութիւնդ , բա-  
 րոյականութիւնդ , կրօնդ , Աստուածդ , Քրիստոնէու-  
 թեան Հիմնադրին հետ կը միանայ և անոր հետ մէկ-  
 տեղ երկիրք կը վերանայ կը համբառնայ ու լուսաւոր  
 ամպերու մէջ աներևոյթ կ'ըլլայ նե՛ր ո՛վ ի՛նչ չիկրնար  
 քեզմէ յուսալ . բայց ո՛վ կրնայ գրեզ արժանապէս գու-  
 վել ու հռչակել . աւելի կը զգացուի քան թէ կը բա-  
 ցատրուի : Ա՛խ , եթէ այն յիշեալ աստուածային ամ-  
 պերուն մէջէն գերբնական ելեքորական կայծ մըն ալ  
 գողնայիր ու այս իրարմէ զատուած հոգւոյն ու մարմ-  
 նոյն մէջ փայլատակելով միաւորութիւն մը կողմելով՝  
 մարմինը հոգեւորելու ու հոգին մարմնաւորելու ըլլա-  
 յիր նե՛ր անհաւատներն ալ քու հրաշքներուդ կը հաւ-  
 տային և գրեզ բռնի կը սիրէին :


Դառնանք մեր եղբորներուն : Ահա ուրիշ հայե-  
 ցուած մը . ահա յուսալից ճառագայթ մը :

Եթէ ազգերնուս քաթոլիկ մասին վրայ մեկալ մա-  
 սին ունեցած ծուռ համարումները ժամանակին ջան-  
 քովը և կիրքերուն կուռքերուն կործանմամբը ուղղ-  
 ւեցաննէ , եթէ հիմա ալ չքաթոլիկ հայ մը դքսութիւն

լիկ հայը լատին կամ ֆրէնք չի տեսներնէ, մանաւանդ  
 թէ գերազանցապէս (բար էքսէլանս) հայ կը տեսնէ  
 նէ, եթէ նոյնը ազգասէր, բարեկիրթ ու լուսաւոր  
 կը տեսնէ նէ, եթէ զոյն իրեն չափ քաղաքական գո-  
 յութիւն ու իշխանութիւն ունեցող կը ճանչնայնէ,  
 եթէ անոր մէջ աւելի ներդաշնակութիւն, աւելի ա-  
 ռաքինութիւն, աւելի բարոյականութիւն, աւելի գի-  
 տութիւն կը նշմարէ նէ, և մէկալ կողմանէ իր բարո-  
 յականութիւնը իր նուիրական հնոցովը մէկտեղ վե-  
 բանորոգութեան (րէֆորմի) և հրահանգի (տիշիւ-  
 լինախ) կարօտ կը զգայ, և կ'իմանայ միանգամայն որ  
 իր կենդրոնական ձգողութիւնը նուազելու վրայ է,  
 երթալով իր մասունքները իրմէ բաժնուելու վրայ են,  
 շատերն ալ երկու կողման մէջ ձօժալու գիրք մը առած  
 են՝ այն սիրահարներուն պէս՝ որոնք սիրւած ըլլանուն  
 վրայ տարակուսելով՝ կուրծքերնուն մէջ սիրտերնին  
 կ'երթայ կու գայ, մէկ խոստովանութեան մը մէկ Զէշ  
 իրիւրէ՛ք բացատրութեան կը կարօտի, որուն մեծանձն  
 (ֆիէր) սիրելին չի կրնար սկիզբ ըլլալ՝ միշտ գիմացիներն  
 կը սպասէ . . . : Ասամէնը տեսնելով՝ անտարակոյս քաթո-  
 լիկութիւնը հայուն հետ ամուսնանալուն շատ բան  
 չէ մնացեր պիտի ըսուի : Բայց արդեօք աս շաք Բան  
 ըսուածը Բիշն է թէ Ժամանակ . պէտ խնդիր մը մթին և  
 հիմակու հիմա անլուծանելի և երևոյթներու կամ  
 պատմութեան կարօտ : Ի վերայ այսր ամենայնի՛ ճիշդ  
 գիտողութիւն մը կը ցուցնէ՝ որ առջինին նուազու-  
 թիւնը երկրորդին հետ ուղիղ համեմատութիւն մը  
 առնելու վրայ է : Սակայն թէ որ հակառակորդ մը պողա-  
 լու ըլլայ թէ՛ Պարսպ են այս խորհրդածութիւնները,  
 պարսպ են այս հետևութիւնները, պարսպ են միւս-  
 թեան ու միաբանութեան կարծիքները, պարսպ է քա-  
 թողիկութեան հայ ծաւալումը, ու հայութեան քա-  
 թողիկ սեղմումը . . . : Պատասխան . Յուսահատու-  
 թիւնը կամ անտարբերութիւնը աշխարհքիս վրայ  
 գործունէաց տարր մը չէ, մեռեալ հսկայ մըն է կամ

անոր անմարմին ուրուականն է : Թող քաղքցիներէն  
 ոմանք կրօնը մինչուկ գեղացւոյն ծոցը աքսորեն . նոյն  
 աքսորեալը՝ գեղացին կ'առնու քաղաքացի կ'ընէ՝ ուր  
 որ քաղաքացին անհետ կ'անցնի՝ պարսպ տեղ մը թող  
 տալով : Կարծեմ թէ նոյն կրօնը՝ ինչպէս մինչև հիմա ,  
 ասկէ ետքն ալ կը յաղթանակէ ու կը նշաւակէ իր երեք  
 դուստրներովը . Կաթողիկէ Հաւատք մը պէտք է որ  
 միշտ տարածողական կամ ընդհանրական ըլլայ . Քրիս-  
 տոնեայ Սէր մը պէտք է որ միշտ միութեան կամ զու-  
 դութեան ջանայ . Ուղղափառ Յոյս մը պէտք է որ  
 միշտ երանութեան գիմէ :









« Ազգային գրադարան



NL0249549

